

ԲԱՐԲԱՌԱՏԻՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թանասիրական գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայերեն բառերի նախավոր ձևերը, ինչպես հայտնի է, բարբառներում ու խոսվածքներում ընդհանրապես կերպարանափոխվում են. ըստ որում չկա որևէ բառ, որ բոլորի մեջ պահպանվի նույնությամբ կամ առանց հնչյունական ձևափոխության: Բառերի նախավոր ձևերի կրած բարբառային կերպարանափոխությունները, սակայն, ճիշտ միատեսակ բնույթ չեն ունենում. կան բաղմամբով բառեր, որոնց կերպարանափոխված ձևերը շատ չհեռանալով նախավոր ձևերից՝ ծագումնաբանական սերտ կապով կապված են մնում դրանց հետ և անմիջապես էլ մատնում են իրենց ծագումը, հմմտ. Բանքան (ննխ. Պլ. Տփ.), բան (Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. Սուչ.), բոն (Ողմ.), բեկ (Մղր.), պոն (Գոր. Մկ. Մրդ. Շմ. Սլմ. (Վն.), սլեկ (Ղրբ.), փան (Խ.), փոն (Տիգ.), փա (Ասլ.), բ'ոն, բ'ոն (Ջթ.), բ'ոն (Հճ.), պոն (Հմշ.), բիւն (Ազլ.)¹, Սիրտ>սիրտ (Ախց. Երև. Կր. Մրդ. Ջղ. Տփ.), սիրդ (Ալշ. Խրբ. Մշ. ննխ. Պլ. Խ. Սեբ. Սվեդ. Տիգ.), սիրդ, սիր (Ասլ.), սիւտ (Վն.), սի'րդ (Սշ.), սէրտ (Գոր.), սրէրտ, սրոտ (Ղրբ.), սէոտ (Մկ.), սրւտ (Հվր. Շմ.), սիյդ (Հճ.), սրյդ, սրդ (Ջթ.) սաոտ (Ազլ.), սիտ (Սլմ.), սիդ (Հմշ.)² և այլն:

Բայց կան նաև բառեր, որոնք բարբառներում ու խոսվածքներում շատ մեծ, հաճախ նույնիսկ անճանաչելի փոփոխության են ենթարկվում և մի կողմից՝ այդպիսի կերպարանափոխության, մյուս կողմից՝ իմաստային տարբերակման հիման վրա ձեռք բերում ինքնուրույն բառույթային արժեք: Նման դեպքերում դրանց ու համապատասխան նախավոր ձևերի ծագումնաբանական կապը սովորաբար կամ զոնե արտաքուստ մթազնած է լինում: Հայերենի բարբառներում ու խոսվածքներում այդ ճանապարհով առաջ են եկել բավական թվով բառեր, որոնց մի մասի ծագումը հայ լեզվաբանական գրականության մեջ կա՛մ տակավին չի պարզաբանվել, կա՛մ սխալ է մեկնաբանվել: Սույն հոդվածում էլ ահա փորձ ենք անում տալ հենց այդպիսի որոշ բառերի ծագման մեկնություն:

1. ՄՐՑՆԵԼ, ՄՐՅՐԱՆ

Մրցնել||մրցրնել (=«փակել, ծածկել, կողպել»): Թեև շատ սովորական բառ է Դորիսի բարբառում ու դրան մերձակից խոսվածքներում, բայց մինչև այսօր տեղ չի գտել ոչ մի (այդ թվում և որևէ գավառական) բառարանում: Արդ՝ ինչի՞ց է ծագում մրցնել բայը, «ել» դերբայական մասնիկով կաղմված փոխառյալ, թե՞ բուն հայկական բառ է: Իր արտաքին՝ հնչյունական կաղմով

¹ Տե՛ս Ղր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատ. 1, Երևան, 1926, էջ 941:

² Տե՛ս նույն տեղում, հատ. 6, Երևան, 1932, էջ 253—254:

այն ունի հայաբնույթ բառերին հատուկ կառուցվածք և, անշուշտ, ո՛չ թե փոխառյալ ինչ-որ ձևից կաղմված, այլ զուտ հայկական բառ է։ Պետք է ասել, որ իբրև այդպիսին, մրցնել բայը այլ բան չէ, քան ամրացուցանել (>ամրացնել) պատճառական բայի բարբառային մի արտահայտությունը, որ առաջ է եկել ամրացուցանել>ամրացուցընել>ամրացընել> (=ամրացնել) ամրցընել>մրցընել>մրցնել ընթացքով։ Պատճառական բայերի մեջ հնչյունների այդօրինակ անկումը հանրահայտ ու սովորական երևույթ է, հմմտ. արմատացուցանել—արմատացնել, առաջացուցանել—առաջացնել, բազմացուցանել—բազմացնել, բարձրացուցանել—բարձրացնել, զիրացուցանել—զիրացնել, այլև՝ ամրացուցանել—ամրացնել և այլն։ Վերջին օրինակը շատ պարզորոշ ցույց է տալիս, որ եթե արևելահայ աշխարհաբարը ամրացուցանել>ամրացնել ձևի առաջացման ժամանակ բավարարվել է ու, ա ձայնավորների և կրկնակ ց-երից մեկի անկումով, ապա Գորիսի բարբառը և այն խոսվածքները, որ մրցնել ունեն, նրանից առաջ են անցել՝ սղելով նաև բառասկզբի ու բառամիջի ա-երը։ Դա լավագույնս հաստատվում է նոր Հայկազյան և Առձեռն բառարաններում նույն ամրացուցանել բայի աշխարհաբարյան բացատրությունների շարքում տրված ամրցընել ձևով³, որ միայն բառասկզբի ա-ով է տարբերվում մրցընել>մրցնել բառից։ Բայց այս դեպքում էլ եթե նկատի ունենանք, որ այդ բառը կամ բառաձևն ունեցող բարբառները կարող են հապավել նաև բառասկզբի ա ձայնավորը, ինչպես՝ աղաչանք>ղա՛չանք, ածելի>ծի՛լի, ապապարել>փրապա՛րել, ալօթել>լօ՛թել և այլն, ապա միանգամայն պարզ կլինի հնչյունաբանորեն ամրացուցանել բայից մրցնել ձևի առաջացման հնարավորությունն ու իսկությունը։

Հավասարապես նույնը պետք է ասել և ամրացնել (<ամրացուցանել) և մրցնել բայերի իմաստային կողմի մասին։ Մրցնել բայի գործածությունները, ինչպես՝ «Տունը մրցըրալ էմ» (=«Դուռը փակել եմ՝ ամրացրել եմ»), «Քիլիդը մրցըրու» (=«Կողպեքը կողպիր»), «Դիրվ ֆզան խէ՞ չէս մրցըրում» (=«Դարպասը ինչո՞ւ չես կողպում»), ցույց են տալիս, որ այն իմաստաբանորեն աղբյուրակցվում է ամրացուցանել (>ամրացնել) բայի «ամրցընել», «ապահովընել» իմաստներին⁴ և ըստ էության արտահայտում է նույնպես մի բան ամրացնելու՝ ապահով դարձնելու նշանակությունը. որևէ բան կողպեքով թե մի այլ հարմարանքով կողպել-փակելը ինքնին այն ամրացնել՝ ապահով դարձնել, և, ընդհակառակն, մի բան ամրացնել-պնդացնելն էլ այն կողպել՝ փակել է նշանակում, որ իրագործվում է առաջին գործողության միջոցով ու հետևանքով։ Այսպիսով, ամրացուցանել (>ամրացնել) բայը բարբառում հնչյունական ձևափոխություն կրելուց զատ նաև իմաստային տարբերակման է ենթարկվել և իմաստի նեղացման ճանապարհով ստացել «փակել, կողպել» նշանակությունը։ Այդ հիման վրա մրցնել բայաձևը ըմբռնվել-գիտակցվել է իբրև ամրացուցանել (>ամրացնել) բայից անկախ ու ինքնուրույն բառույթային միավոր։ Բնորոշ է և այն, որ այդ բայը իր անցյալ կատարյալի հիմքով (մրցր-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին) բաղադրվել է ան ածանցի հետ և տվել մրցրան||մրցըրան (=«փականք, կողպեք») գոյական բառը, որ ի դեպ, կաղմությամբ լիովին համընկնում

3 Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 76։ «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 31։

4 Տե՛ս նույն տեղում։

է Գորիսի բարբառի որոշ գյուղական խոսվածքներում նույն եղանակով կաղամբված կրեցրան (= «ճրագ, ընդհանրապես կրակ առաջ բերող բան») բառին⁵:

2. հոհա||հոհա

հոխա||խոխա բառը շատ սովորական ու տարածված բառ է Գորիսի և Ղաբաբաղի բարբառներում: Նշանակում է «1. Երեխա, ծնողի չհասունացած որդի, գավակ» և «2. տղայամիտ, մանկամիտ, անմիտ, անփորձ», հմմտ. «Քանի՞ խոխա օնէս» (= «Քանի՞ երեխա ունես»), «հօխօրցըտ հո՞ւնց էս պահում» (= «Երեխաներիդ ինչպե՞ս ես պահում»), «Քու մար մըն խոխա չա պիրալ» (= «Քո մայրը մի երեխա է ծնել») և «Ծո՛ւ հալում խոխա չէս, պան չէս գլուգլում» (= «Դու դեռ երեխա (— անմիտ, անփորձ) ես, բան չգիտես»), «հօխա-խօխա խօսում իլ» (= «Միամիտ-միամիտ մի՛ խոսիր»), «Բա ըտըհէ՞նց խօխա կօրծ կըփըռնէն» (= «Բա այդպիսի՞ անմիտ զործ կըռնեն») և այլն: Հր. Աճառյանը առաջինը ուշադրություն դարձնելով խոխա||խոխա բառի ծագմանը, դա համարել է փոխառություն և, բխեցնելով թուրքական խախա (xaxa = «տխմար, անմիտ») բառից⁶, ծագումնաբանական ոչ մի կապ չի տեսել նրա ու երախա||երեխա բառի միջև և, բնականաբար, նաև Արմատական բառարանում չի ներկայացրել իբրև վերջինիս բարբառային տարբերակներից մեկը: Այնինչ իրականում խոխա||խոխա բառը թե՛ իր ներքին՝ իմաստային և թե՛ իր արտաքին՝ հնչյունական կողմերով սերտորեն մերձենում է երախա||երեխա բառին և, հենց սկզբից էլ ասենք, պարզապես դրա բարբառային մի այլատեսակն է: Երախա||երեխա բառը, ինչպես հայերենի մեծարժեք բառարաններն են հավաստում⁷, արտահայտել է «1. Անկենդան, քրիստոնեական մկրտություն դեռ չստացած, չմկրտված», «2. Նորածին կամ դեռ անխոս մանկիկ» և «3. Տղայամիտ, անմիտ» նշանակությունները⁸, որոնցից էլ Հր. Աճառյանը հիմնականը առաջինն է համարում և միաժամանակ հաստատում, թե «երբ սովորություն դարձավ մկրտությունը կատարել մանուկ ժամանակ, երախա բառն էլ ստացավ «մանկիկ» նշանակությունը, որից էլ հառաջացավ վերջապես «տղայամիտ» նշանակությունը»⁹:

Բացի առաջինից, որ ընդհանրապես մեռած է աշխարհաբարում, մյուս նշանակություններով երախա||երեխա (>երախա||երեխա) բառը և դրա բարբառային ձևերը՝ յէրախա (Ողմ.), էրէխա (Ալշ. Մշ. Տֆ.), աբախա (ՆՋղ. Հվր. Շմ), բրէխա (Երե.), յաբախա (Ջղ.), բրախա (Ղրբ.), բախա (Գոր.), բրխա (Ազլ.), էլէխո (ՀՃ.)¹⁰, ամբողջապես նույնական են: Բայց իր իմաստներով

⁵ Այդ բառը և համապատասխան կրեցնել<կրցնել պատճառական բայը ևս տեղ չեն գտել որևէ բառարանում. ծագման և նշանակության համար հմմտ. եի կէնա (ս1. Վառվել, բռնկվել 2. Սաստիկ բարկանալ) և եի կրցընել>եի կրցընել (ս1. Վառել: Սաստիկ բարկացնել):

⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Մոսկվա—Վաղարշապատ, 1902, էջ 159—160:

⁷ Տե՛ս «Նոր քաղերբ Հայկազնան լեզուի», հատ. 1, էջ 666: «Առձևոն բառարան հայկազնեան լեզուի», էջ 265: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, Երևան, 1944, էջ 576—577:

⁸ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1928, էջ 751:

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 752—753:

դրանց հետ նույնական է նաև խոխա||խօխա բառը, որ րա'խա, րա'խա ձևերին զուգընթաց, իբրև ավելի լայն գործածություն ունեցող ձև, հանդես է գալիս Գորիսի և Ղարաբաղի բարբառներում: Այդ բոլորի միջև դրսևորվող իմաստային ընդհանրությունն ու նույնությունն ակներևաբար ցույց է տալիս, որ խոխա||խօխա բառի հիմնական նշանակությունը եղել է և է «երեխա, մանկիկ» իմաստը, և հետևաբար, այն ոչ թե թուրքական խախա (xaxa «տխմար, անմիտ»), այլ բուն հայերեն երախայ||երեխայ բառի հետ է կապվում ու սերում նրանից:

Արդ՝ ինչպիսի՞ հնչյունական ձևափոխությունների է ենթարկվել նախալոր երախայ||երեխայ բառը և րա'խա-ի կամ րա'խա-ի կողքին առաջ բերել դրանց համեմատությամբ շատ ավելի գործածական խոխա||խօխա ձևը: Պետք է ասել, որ դա երախայ||երեխայ բառի ավելի բարդ ու շատ ավելի հեռուն զնայած հնչյունական ձևափոխությունն է և, ահշուշտ, առաջ է եկել երախայ||երեխայ > րախա||րեխա > հրախա||հրեխա > հրօխա > հօխա > խօխա (խոխա) ընթացքով. ե > ը ձայնափոխության և բառասկզբի հ-ի համար հմմտ. երախ > ըռէխ. ըռռէխ (Գոր.), ևրամակ > ըրամանգ||ըրամակ (Գոր.), երանի > ըներակ, հնէրակ (Ղրբ.), երեսուն > ըրէսուն (Ղրբ.)—ըրէսսուն (Գոր.), երեխ > ըրէվա||յրրօվալ (Գոր.)—ըրվալ (Ղրբ.), ընկեր > հընգէր||հինգէր (Գոր.)—հընգէր (Ղրբ.), ընտրել—հընգըրէլ (Գոր.)—հընգըրէլ (Ղրբ.), ամաշել-հըմանշէլ (Գոր. Ղրբ.) և այլն:

Այսբանից դժվար չէ նկատել, որ երախայ||երեխայ > խոխա||խօխա ձևափոխությունների շղթայի մեջ միջին օղակ են կազմում րախա||րեխա > հրախա||հրեխա հավաստի ձևերը, որոնք Բ-ին հաջորդող ձայնավորի (հավանաբար՝ է-ի, հմմտ. երեխ-յրրօվալ) փոփոխությամբ դարձել են հրօխա, որտեղ մի կողմից հնչյունի (ըր-ի) անկում՝ հրօխա > հօխա¹¹, մյուս կողմից հտընթաց լիակատար առնմանում (հօխա > խօխա) է տեղի ունեցել, և այդպիսով էլ ծնունդ է առել խոխա||խօխա ձևը: Դա յուրովի հաստատվում է նաև այն ձևաբանական իրողությունների ընդհանրությամբ, որ երևան են հանում րախա||րախա և խոխա||խօխա բառերը իրար նկատմամբ՝ հոգնակիի կազմության և հոլովման ժամանակ, հմմտ. րախա||րեխէֆ և խօխա-խօխէֆ (հմմտ. նաև տրդա-տրդէֆ), րխօցր և խօխօցր||խօցր, րխօցան և խրխօց-ցան||խօցցան և այլն¹², Այսբանն էլ, կարծում ենք, բավարար հիմք է տալիս ընդունելու, որ խոխա||խօխա ձևը իրոք տակավին անստույգ հայերեն երախայ||երեխայ բառի բարբառային մի արտահայտությունն է և ծագումնաբանական ոչ մի կապ չունի թուրքական խախա (xaxa)-ի հետ:

3. ԱՌՌԻ

Իր «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում մեծանուն հայագետ Հր. Աճառյանը խոսելով «աշխարհի բնիկ հայ բառերի» մասին, «որոնք պատահմամբ չեն մտել հին գրականության մեջ, հետո մոռացության մատնվել ընդհանուր հայ լեզվի կողմից և պահվել միայն մի գավառի անկյունում», մի

¹¹ Ի դեպ կան բարբառախոսներ, որոնք այսօր էլ խօխա-ն հօխա են արտասանում (օրինակ՝ Ա՝ հօխա, խէլունք կաց):

¹² Գորիսի և Ղարաբաղի բարբառներում խօխա-խօխա, րախա-րախա ձևերից բացի գործ է ածվում նաև խօխա-րախա (—երեխաներ) կրկնավոր բարդությունը, որը իր հերթին նույնպես ազդանշում է նրանց միջև եղած ծագումնաբանական կապը:

փոքրիկ բառացանկում հիշատակում է նաև «Ա՛ռնէ Ղրբ. «հույժ, շատ» բառը¹³, նա միաժամանակ մի կողմից նկատում է, որ դրա «հին ձևը պիտի լինի ա՛ռնի. ուր անշուշտ ու կրկնված է սաստկության համար», մյուս կողմից էլ ենթադրյալ առի պարզ ձևը համեմատում է հուն. αρι, ερι, վեդ. αρι սաստկություն ցույց տվող նախամասնիկների հետ¹⁴։ Սույն բացատրությունն ամբողջապես չմերժելով հանդերձ, մենք, սակայն, ավելի շատ հակամետ ենք կարծելու, որ առնի բառը, որ հենց նույն ա՛ռնի ձևով գործածական է Գորիսի, ա՛ռնէ ձևով՝ Ղարաբաղի, ա՛ռն։ ձևով՝ Մեղրու բարբառներում, ծագում կամ սերում է առնուլ (>առնել) բայի առ հրամայականից։ Ի՞նչ ապացույցներ ունեք դրսև համար. նախ պետք է ասել, որ համապատասխան բարբառներում գործածվող ա՛ռնի || ա՛ռն. || առն. բառը ո՛չ ածական է և ո՛չ էլ մակբայ¹⁵, այլ զուտ եղանակավորիչ բառ է և նշանակում է «շենց, իսկը, իբրև թե, կարծես թե, ի հի-ճուկս, դե»¹⁶, օրինակ՝ «Ա՛ռնի տու էլ մարթ էս տառալ. մէզ հավան չէս կէնում» (—«Իբրև թե դու էլ մարդ ես դարձել, մեզ չես հավանում»), «Ա՛ռնի լափ լավ ա՛ = «շենց շափաղանց լավ է), «Ա՛ռնի վէր ըսրհէնց ա, ըսէլու վէմ» (—«Իսկը որ այդպես է, ասելու եմ»), «Ա՛ռնի չիման մէծն էմ յէր կալալ» (—«Ի հիճուկս՝ բոլորից մեծն եմ վերցրել»), «Ա՛ռնի լիհա մէզ կըլխէն ա տի-նում» (—«Կարծես թե մեզ գլխին է դնում») և այլն։

Հիշյալ նշանակություններն ունեցող ա՛ռնի||ա՛ռնէ||առն. բառից բացի, Գորիսի, Ղարաբաղի բարբառներում կա նաև առնէ՛ ձևը, որ սովորաբար գործ է ածվում իբրև մեկին անիծելու, հանդիմանելու, գրող շափելու արտահայտություն, ինչպես՝ «Առնէ՛ ա՛ խօխա, լավ օր վօշ տէսնաս» (—«Գրողը քեզ տանի ա՛յ երեխա, լավ օր շտեսնես»), «Առնէ՛ վէր ինձ լըսում չէս» (—«Գրողը քեզ տանի, որ ինձ չես լսում»), «Առնէ՛ լիվօթունըս աշկէրըտ օնի» (—«Առնէ՛ լավությունս աշքերդ բռնի») և այլն¹⁷։ Դա գործածելիս խոսողը պարտադիր կերպով մատները շոյելով՝ ձեռքի ավեր պարզում է դիմացինի երեսին և հաճախ էլ իմաստի սաստկացման նպատակով կրկնում նույն բառը, ինչպես՝ «Առնէ՛-ա՛ռն. ըոնըթաթախ տաննաս տու» (—արյունաթաթախ դառնաս դու), «Առնէ՛-ա՛ռն մահրմաղբուն մընաս տու» և այլն։ Նույնպիսի նշանակությամբ ու կիրառությամբ Գորիսի բարբառում գործածական են նաև կայէ՛ և կայէ՛-կա (հմմտ. «Կայէ՛ ա՛ խօխա, լավ օր վօշ տէսնաս» — «Կայէ՛-կա՛ ա՛ խօխա լավ օր վօշ տէսնաս»), ֆէլէ՛ և ֆէլէ՛ — ֆէլ (հմմտ. «Քէլէ՛ ա՛ աշկի կ'իբօղ» — «Քէլէ՛-ֆէլ, ա՛ աշկի կ'իբօղ») արտահայտությունները, որոնցից մեկը սերում է գրաբարյան ունիւմ անկանոն բայի եղակի հրամայականից, իսկ մյուսը՝ ֆիլ («Ձեռքի բթամատի և ցուցամատի ծայրերի միջև եղած լայն բացվածքը») գոյական բառից։ Դրանք բոլորը կապվելով հին սնոտիալաշտական մտածողության հետ, չարը մեկին ուղղելու-վերագրելու բառեր են և ոչ պատահականորեն

¹³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1, Երևան, 1940, էջ 119։

¹⁴ Տե՛ս նույն տեղում։

¹⁵ Տե՛ս, օրինակ, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, էջ 233, որտեղ գլխաբառը ներկայացված է այսպես «ԱՌՌԻ, ած. մկ. բոլորովին, ամենա, էն... (զերադրական աստիճան կազմող բառ և մասնիկ)»։ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 137։

¹⁶ Առնի բառը բնավ չունի այն իմաստները, ինչ Հր. Աճառյանն ու Ստ. Մալխասյանցն են ստում։

¹⁷ Գորիսի բարբառով բերված այս և ընդհանրապես բոլոր օրինակներում պահպանված են Քարաշեն գյուղի խոսվածքի առանձնահատկությունները։

արտահայտվում են հրամայական եղանակով: Եվ այնուհետև հրամայականի այդ յուրահատուկ ձևերից հատկապես ա՛ռո-ը կամ ա՛ռոէ-ն գործ են ածվում նաև մի այլ՝ հորդորական, մեկին ջգրացնելու, մի բան ցույց տալու, բայց չտալու, մեկի նկատմամբ իր առավելությունը կամ հաղթանակը շեշտելու նշանակությամբ, «Ա՛ռո, ալ հի՛նչ աւէրտըդ օղում», «Դէ ա՛ռո, ըտըհէնց էմ անում է՛» և այլն: Առնուլ (>առնել) բայի հրամայականը, որ ուշագրավ փաստ է, հորդորական նշանակությամբ գործ է ածվել դեռևս գրաբարում. «Առ, առէ՛ք, ած, բեր և նման հրամայականները,—վկայում են Չալըխյան-Այտընյան բերականները,—իբրև հորդորական միջաբկություն (ընդգծումն իմն է—Ա. Մ.) կավելացվեն խոսքին սկիզբը: Առ արա՛ զոր ասեմքս քեզ»¹⁸: Կարծում ենք, որ առնուլ (>առնել) բայի հրամայականի հենց այդպիսի կիրառությունն էլ ժամանակի ընթացքում առաջ է բերել բարբառային ա՛ռոի||առոէ||առոէ բառը, որ տվյալ դեպքում իմաստապես նրանից տարբերվում է նշանակության սաստկությամբ: Եվ ոչ միայն այդ. վերջինի պահանջով ու թելադրանքով երբեմնի հրամայականը ենթարկվել է միաժամանակ հնչյունական ձևափոխության. մի կողմից կրկնվել է առ-ի ո հնչյունը, մյուս կողմից՝ առ+ո>առո-ը միահյուսվել է «է՛» միջարկությանը և առաջ բերել ա՛ռոէ (Ղրբ.), առոէ (Մեղրի) և ա՛ռոի (Գորիս) ձևերը: Եվ եթե դա այդպես է, ապա նշանակում է առոի-ն ոչ թե հին գրականության մեջ շմտած ու սոսկ «գավառի անկյունում» պահված, այլ հնդեվրոպական ծագում ունեցող¹⁹ առնուլ (>առնել) բայի եզակի հրամայականի բարբառային մի արտահայտությունն է, որ գրականության մեջ տեղ չի գտել զուտ գրական աստիճանի չբարձրանալու պատճառով:

1. ՃՈՇ||ՃՈՇԹ.—→ՃՈՇԿ||ՃՈՇԿ

Ճոշ||նոշ — նօշ||նօշ (=*բամբասանք, շարախոսություն*) բառը, որի ծագումն առ այսօր անհայտ է²⁰, գրավոր ավանդված է նախ՝ Կեղծ-Շապուհ Բագրատունու Պատմության մեջ (սկսել եմ թէ Դերենիկտ, որ իմ փեսայ է զԹուլինար քոյրն ձեր սիրէր, շամաշէ՞ք դուք զայգ տալ առնել: Ամենայն հաւատի նաւը է՛ք, էջ 67)²¹ և ապա՝ միջին հայերենում, ինչպես՝ «Ես զիմ աստուծոյ ստոյղծածն իմ սիրել, 'ւ ի նոշ եմ առեր» «Ջայս մէկս այլ կամիմ սիրել, թէ հաւսար ի նօշ եմ առել»²², «Կինն որ զալատի մեղօք կամ ընկնի և նոշ'ի բամբաս»²³, Միջին հայերենը ունի նաև նույն արմատից կազմված նօշալ (*=բամբասել, շարախոսել*) բայը, օրինակ՝ «Ամէն ալանի հային, Ես՝ գաղտուկ, ու դեռ կու նօշան»²⁴, Այդ երկու՝ նօշ||նոշ և նօշալ||նոշալ բառերը պահպանվել են հայերենի որոշ բարբառներում. այսպես՝ նօշ Թրիլիսիի բարբառում նշանակում է «բամբասանք», Մշո բարբառում՝ «1. վեճ. կռիվ, 2. խոսե-

18 Վրթ. Չալըխյան, Քերականութիւն հայկազնեան լեզուի. Վիեննա, 1858, էջ 370:

19 Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 481—483:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 703:

21 Այդ բառի գործածության և նշանակության բացատրության մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ. Վենետիկ, 1922, էջ 59—60:

22 Տե՛ս Մ. Արեղյան, Իրանական ժողովրդական խաղեր, Երևան, 1940, էջ 186 և 86:

23 Այդ օրինակը առնված է Ն. Բյուզանդացու Սիջին հայերենի տակավին անտիպ բառաբանից:

24 Մ. Արեղյան, Նշվ. աշխ., էջ 109:

լու և բամբասելու նյութ»²⁵, իսկ ճշգրտաբան (բամբասել, շարախոսել) բայի համար մի շարք բարբառներ (Մուշ, Վան, Թբիլիսի, Սեբաստիա) ունեն ճշգրտաբան բայաձևերը²⁶։ Ավելացնենք, որ ճշգրտաբանը պահում է նաև Գորիսի բարբառը՝ ճշկ և ճոժկ ձևերով, որոնք նույնպես բամբասան են նշանակում և սովորաբար գործ են ածվում անել բայի հետ իբրև բայական բարդություն հարադիր, ինչպես՝ «Կընանիքը մէղ անա ճոժկըն էն անում» (= «Կանայք մեղանից բամբասում են»), «Լըսալ էմ, վէր ինձ անա ճոժկըն էս ըրալ» (= «Լսել եմ, որ ինձնից բամբասել ես») և այլն։

Արդ՝ ինչից է ծագում այդ՝ ճշ(f)||ճոշ(f) > ճշկ||ճոժկ բառը։ Դա անվիճելիորեն առաջ է եկել կենդանի-խոսակցական լեզվի բովում և, կարծում ենք, ծագումնաբանորեն կապվում է ճոճել բայի ճոճ (= «Շարժում, ձոճում») արմատի հետ, որ, իբրև ինքնուրույն բառ, գործ է ածվել գրաբարում։ Ծոճ (f) > ճոշ(f) հնչյունական ձևափոխության հավաստի ապացույցը տալիս է հենց միջին հայերենը, որտեղ ճոճ տալ (սերերալ) բայը գործ է ածված նաև ճոշ տալ ձևով, ինչպես՝ «Մարմինդ քո ձոխ բուսեր շինար, ճոշ կու տալ քան զուռ դալար»²⁷։ Իսկ սա ինքնին ցույց է տալիս, որ ճոճ բառում պարզապես սովորական տարնմանություն է կատարվել, բառասկզբի ձ-ն ազդել է մյուս՝ բառավերջի ն-ի վրա և հեռացնելով իրենից՝ դարձրել շ, որն էլ իր հերթին որոշ բարբառներում (Ղարաբաղ, Գորիս) փոխարինվել է համապատասխան ժ ձայնեղ հնչյունով։ Ուրեմն՝ այս դեպքում կարևոր է և մնում է պարզել միայն, թե արդյոք կարող էր ճոշ||ճոժկ (բամբասանք) բառը իմաստապես կապվել գրաբարյան ճոճ(f) բառի հետ և սերել նրանից։ Հայտնի է, որ ճոճ(ք)-ը «շարժում, ձոճում» իմաստից բացի դեռևս գրաբարում նշանակել է նաև «կախօրրան, ձուլորթի»։ Այս վերջին նշանակությամբ հատկապես այն գործ է ածվում մի շարք բարբառներում, հմմտ. ճոճ (Երև. Տիւ.), ճոճ (Ախց. Երև.), ճոճ (Ջղ.), ճոշ (Ննիւ.), ճոժկ (Ղրբ.)²⁸, այլև ճոշկ, ճոժկ (Գոր.)՝ «խուխէն ճոժկըն էմ կապալ», «Ծառան ճոշկը քիցի, խուխէն նի կապի» և այլն։ Ծոճ (f) || ճոճ-ը այսպիսով թե՛ իր «շարժում, ձոճում» և թե՛ «կախօրրան» նշանակություններով մի բան տարբերելու, մեկ՝ դեպի մի կողմ, մեկ՝ դեպի մյուս կողմ տանել-բերելու գործողություն է ցույց տալիս։ Ժողովրդական պատկերավոր մտածողության մեջ ճոճ բառի ճոճումնաբանությունը գործողության (հմմտ. բամբասում եմ) + բաս բասում ես = բամբասել, ասե՛ բասի + կասե՛ կասի = ասե՛կասե՛ նման մի բան. ուստի և ճոճ (> ճոշ > ճոշկ > ճոժկ)-ի մեջ ընկնել, նշանակել է բամբասանքի առարկա դառնալ, ճոճ (> ճոշ > ճոշկ + ճոժկ)-ի մեջ առնել (ի ճոշք առնուլ), նշանակել է՝ բամբասել, վատաբանել կամ շարախոսել մեկին։ Եվ հենց դրանով պետք է բացատրել, որ ճոճ > ճոշ-ը դեռևս միջին հայերենում գործ է ածվել ընկնել (< անկանել), առնուլ (> առնել) բայերի հետ՝ արտահայտելով տեղի նշանակություն նրանց համար։ Այդ տեսակետից շատ գեղեցիկ օրինակ է «Կինն որ զալատի մեղօք կամ ընկնի ի ճոշ՝ ի բամբաս» նախադասությունը, որտեղ ճոշ և բամբաս բառերը ընկնել բայի հետ հավասարապես գործ են ածվել իբրև հոմանիշներ։

25 Տե՛ս Ղ. Աճառյան, Հայերեն գովառական բառարան, էջ 730։

26 Տե՛ս Ղ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատ. 4, էջ 703։

27 Տե՛ս Կ. Կոստանյանց, Հովհաննես Թևորանցի և յուր տաղերը, Թբիլիս, 1892, էջ 25։

28 Տե՛ս Ղ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատ. 4, էջ 702։

պատահական չպետք է համարել և այն, որ դրանցից նույն անհատանցով կազմվել են 602-ն (||ճողանք) և բալթասանի բառերը, որոնք դարձյալ միաստեպակ նշանակություն են արտահայտում: Այսքան էլ, կարծում ենք, հաստատում են 602||602||602-ի՝ 602(f)-ից իմաստային տարբերակմամբ ծագած լինելու իսկությունը և միաժամանակ ցույց տալիս, որ բալթասանի նշանակությունը զուտ փոխաբերական նշանակությունն է, որով և պայմանավորված՝ մի քանից առաջ են եկել իրարից «բավական հեռացած» երկու առանձին ու տարբեր բառեր:

5. 5419

Շալիֆ (=գոլորշի, շոգի») բարբառային բառ է, որ հիշատակված ենք տեսնում Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանում»²⁹, Հր. Աճառյանի «Հայերեն դավառական բառարանում»³⁰, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»³¹ և որոշ բարբառների ուսումնասիրությունների բառացանկերում³²։ Ս. Ամատունին այդ բառը հատուկ է համարում Պարաբաղի բարբառին և Գանձակի, իսկ Հր. Աճառյանը՝ սոսկ Պարաբաղի բարբառին։ Նորագույն տվյալները, սակայն, ցույց են տալիս, որ շալիֆ բառը գործածական է ոչ միայն նշված, այլև Գորիսի, Մեղրու, Կարձևանի, Կաքավաբերդի բարբառներում կամ խոսվածքներում, որոնց բոլորի մեջ էլ արտահայտում է նույն՝ «շոգի, գոլորշի» նշանակությունը։

Արդ՝ ի՞նչ ծագում ունի, այնուամենայնիվ, ոչ նեղ ոլորտներ ընդգրկող շալվ բառը. կառուցվածքը ամենից առաջ ազդանշում է, որ դա բաղադրյալ կամ պարզ ածանցավոր, կախինքն՝ շալ արմատից և և՛ ածանցից կազմված բառ է, հմմտ. ծալ-ծալվ. լալն > լէն-լէն, դիր > տիր-տիրւ. յօն||յօն-օն, պա-տաւն-պատաւն, ցիւ-ցէվլ և այլն³³, եվ ահա շալ արմատից և և՛ ածանցից (իմա՝ երբեմնի հոգնակիակերտ մասնիկից) կազմված այդ շալվ բառը իմաստապես իրիստ մեծնակից է արդեն զբաբարում ավանդված շաղ բառին, որ արտահայտում է «Յող, խոնավություն, շիթ. կաթիլ» նշանակությունները³⁴, եվ կամ՝ ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերին բացատրական բառարանի», շաղ նշանակում է՝ առաջին՝ «Ջրի ամենամանր կաթիլներ, որոնք գոյանում են պաղած բույսերի և ալ առարկաների վրա՝ գոլորշիի խտանալուց և որոնք աշնան ցրտերին երևում են եղյամի ձևով»³⁵ և երկրորդ՝ ցող, այսինքն՝ «օդի գոլորշի, որ հեղուկանալով՝ ջրի մանր կաթիլների նման նստում է առավոտները այնպիսի առարկաների վրա, որոնք գիշերը, բաց երկնքի տակ և պայծառ եղանակին, ավելի են պա-

29 Տե՛ս Ա. Ամատուհի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 508—509:

30 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 818:

31 ՏՃ՝Ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Կատ. 3, Երևան, 1944, էջ 491:

32 ՏԵՍ, օրինակ, Հ. Մուրադյան, Կարճևանի բարրաոր, Երևան, 1960, էջ 225 և
Կարապարևորի բարրաոր, Երևան, 1967, էջ 200:

33 նկատելի է, որ Գորիսի բարրառում ածանցի վերածված երբեմնի և հոնակիակերտ մասնիկը բառավերջում ձայնորդին հաջորդելով՝ սովորաբար և է մնում, իսկ մնացած զեպ-քերում սովորաբար տալիս է կ, օրինակ, փօխկ, խօսկ, մկտկը և այլն:

34 Տե՛ս ս՛նոր բառոցրը Հայկազեան լեզուիս, հատ. 2, վեներտիկ, 1836, էջ 460, ալլա՛
Հր. Աճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հատ. 4, էջ 243:

35 ՏԵ՛ս Ս տ. Մ ա յ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 425:

դուժ քան շրջապատող օդը, որի պատճառով նրանց շոշափող օդի գոլորշին էլ պաղելով ջրի է փոխարկվում. շաղ»³⁶։ Այսպիսով, անժխտելի է Շաղ և Շալի բառերի արտահայտած իմաստների ընդհանրությունն ու սերտ կապը. եթե շաղ-ը գոլորշիից առաջացած ջրի սառը կաթիլներն են, որ սովորաբար վաղ առավոտյան նստում են խոտերի, արտերի, ծառերի, ծաղիկների և այլնի վրա, ապա շալի-ն էլ պարզապես դեռևս ջրի կաթիլների չփոխարկված կամ չսառեցված գոլորշին է. օրինակ՝ Գորիսի բարբառում՝ «Ասիվ քրթնընքալ ա, շալքը նէստան յէր աս ինում» [= «կավ քրտնել է, շալքը (=գոլորշին) վրայից բարձրանում է»], «Արէվր տուս աս յէկալ, տափան շալի պիցրանում աս [= «Արևը դուրս է եկել, գետնից շալի (=գոլորշին) բարձրանում է»] և այլն։

Իմաստային այդպիսի սերտ կապ ու ընդհանրություն ունենալով՝ շաղ և շալի (<շալ+ք) բառերն իրարից առանձնապես շեն տարբերվում նաև իրենց արտաքին՝ հնչյունական կառուցվածքով. նույն արմատը պարզապես մի դեպքում վերջանում է -ով, իսկ մյուս դեպքում՝ -ով։ Դա էլ, անշուշտ, հայերենի իրկու -ի-րի (նուրբ և հաստ կամ թանձր)³⁷ տարբեր արտահայտություններ են, որոնք և հաստատում են շաղ և շալի (<շալ+ք) բառերի ծագումնաբանական կապը, հմմտ. այլ-աղալաղել, նշոյլ-նշողել, փայլ-փաղփաղիլ, թոյլ-թողուլ, չիլ-չիլ, տիլ (>բբ. տէլ) — տիղմ, ծիլ-ծէղ, այլև՝ շեղ-շիլ, աղ-անալի և այլն։ Այսքանից էլ հետևում է, որ շալի-ը ինչ-ինչ պատճառներով հին գրավոր աղբյուրներում չավանդված հնագույն բառ է, որ, հնչյունաբանորեն ու իմաստաբանորեն կապվելով շաղ արմատի հետ, թերևս հնարավորություն կընձեռի ուսումնասիրողներին՝ պարզելու և գրա ծագումը, որ, ինչպես Աճառյանն է վկայում, դեռ անհայտ է³⁸։

6. Պէկ (<բԱկ)

Բեկանել բայի՝ գրաբարում ինքնուրույնաբար գործածվող բեկ արմատի ստուգաբանությունը տալիս էր. Աճառյանը Ղարաբաղի բարբառի պէկ բառը «1. փոս. 2. ավերված՝ փլած, ավերակ տեղ» նշանակություններով համարել է նրա բարբառային արտահայտությունը³⁹, Դա նույնությամբ ու առանց վերապահության Արմատական բառարանից փոխ է առել Ստ. Մալխասյանցը, ԲԵԿ գլխարառի տակ երկու մեռած իմաստներից («1. Կոտրած, ջարդած, խորտակված։ 2. Փոխ. Կոտրված, ընկճված, խոնարհած, զղջացած») հետո նշելով «+3. գ. Փոս. 4. Ավերված տեղ, ավերակ» նշանակությունները⁴⁰։

Իրականում, սակայն, Ղրբ. պէկ բառը, որ նշանակում է զուտ «Ավերված, քարուքանդ եղած տեղ» կամ «այն տունը, շինությունը, որ ավերակի է վերածվել», ծագումնաբանական ոչ մի կապ չունի բեկանել բայի բեկ արմատի հետ. այն ոչ թե դրա, այլ պարզապես «հարավային կովկասյան լեզուներից վոխառյալ» բակ («Տան շուրջը եղած գավիթը», «Ոչխարների փարախ») բառի⁴¹ բարբառային ձևերից մեկն է, որը, ի տարբերություն այլ բարբառների

³⁶ Տե՛ս նույն տեղում, հատ. 4, էջ 175։

³⁷ Այդ մասին տե՛ս էր. Աճառյան, Հայկականք 2, 36. Երբ է դարձավ Ղ (ՀՄՍ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 5)։

³⁸ Տե՛ս էր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 4, էջ 243—245։

³⁹ Տե՛ս էր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 1053։

⁴⁰ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, էջ 358։

⁴¹ Տե՛ս էր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 907։

բ'ակ (Ախց. Կր.), բազ (Պլ. Տփ.), բ'ազ (Ալշ. հրբ. Մշ. Սեբ.), բ'ակ (Ոգմ.), պ'ակ (Մկ. Վն.), պ'ակ' (Մրդ. Սլմ.), բ'ոզ (Ջթ.), փա (Ասլ.) ձևերի⁴², ուղղակի որոշ չափով հեռացել է դրանց արտահայտած «տան բակ» նշանակությունից և ստացել «ավերված՝ քարոքանդ եղած տեղ, ավերակ» նշանակությունը։ Նախորդ և այդ նշանակությունը, իհարկե, ոչ թե շինական պարսպով բաժանված, այլ սերտորեն կապված են իրար հետ։ Բնչ պիտի լիներ լեռնային վայրերում դտնվող, քերծերի մեջ և բարձրաբերձ տեղերում կառուցված տների շուրջը եղած բակը կամ գավիթը. անշուշտ, իբրև այդպիսին կարող էին լինել միայն ավերված ու քանդված կամ ավերակի վերածված տեղերը։ Ղարաբաղի պէկ ձևի դիմաց Գորիսի բարբառն էլ ունի պակ ձևը, որը «ավերված տեղ, ավերակ» նշանակությունից բացի, կրկրորդաբար արտահայտում է նաև «արտաքնոց» իմաստը⁴³։ Բայց տվյալ դեպքում կարևոր է ոչ այնքան այդ, որքան այն, որ երկու մերձակից բարբառները երևան են հանում հնչյունափոխական ընդհանուր օրինաչափություններ։ Միավանկ բառերում խլացող ձայնեղին հաջորդող ա ձայնավորը Ղարաբաղի բարբառում տալիս է է, իսկ Գորիսի բարբառում ա, հմմտ. բան > պե-պան, բարձ > պերց-պարց, բաշ > պեշ-պան և այլն։ Ծիշտ այդպիս էլ ահա նախավոր բակ բառից առաջ են եկել Ղարաբաղի և Գորիսի բարբառների պէկ և պակ ձևերը։ Ուրեմն և՛ պէկ-ը ո՛չ թե բեկանել բայի բեկ արմատի, այլ հենց բակ բառի բարբառային արտահայտությունն է և բնականաբար՝ առաջինից պիտի առնվի ու հատկացվի դրան։

7. ԳՈՒՆՉ

Գունչ (=«Քիթր, բերանը և ծնոտը միասին») բառը բացակայում է վաղ շրջանի գրաբարում. նրա առաջին գրավոր վկայությունները նկատված են Վ. Այգեկցու առակներում և Մաղաթիա Աբեղայի «Պատմություն վասն ազգին նետողաց» գրքում։ «Եւ նայ ծոտեց ի դունչն յաղուեսին»⁴⁴, «Աշքերն նեղ իբրև զձագու, քիթն կարճ իբրև զկատու, դունչն մուգ իբրև զշան»⁴⁵։ Այնուհետև նույն դունչ բառը ղնչիկ ձևի հետ միասին հանդիպում է Ն. Քուլակին վերագրվող տաղերում, ինչպես՝ «Դու ա՛ռ զհոգիս ու զմարմինս, և ղնչէլ պագիկ մի ծախէ» (էջ 64), «Առնիր ու բերնիդ դնիր, ցածնայի դունչը պագնէի» (էջ 96—97), «Սիրել պիտի վայն աղվորն, որ ղնչիկն է գէտ կարագ եղ» (էջ 147), «Դնէ զղնչիկն ու խմէ, որ սրտին թալուքն անցնի» (էջ 92), «Իջնում ու պագիկ մ'առնում, Լճղընչին ներքեն ու վերեն» (էջ 153) և այլն⁴⁶։

Այդ երկու՝ դունչ և ղնչիկ բառերից, սակայն, երկար ժամանակ միայն առաջինն է տեղ գտել բառարաններում. նոր հայկազյան բառարանը հավել-

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 908։

⁴³ Այդպիսի իմաստ ունի և Աղուիսի բարբառի բոկ բառը, որ Հր. Աճառյանը իրավացիորեն դիտում է իբրև նախավոր բան բառի բարբառային տարբերակ (տե՛ս Արմատական բառարան, հատ. 1, էջ 988)։

⁴⁴ Տե՛ս Ն. Մառ, Ժողովածոյք Առակաց Վարդանայ, մասն Բ., Ս. Պետերբուրգ, 1894, էջ 62։

⁴⁵ Տե՛ս Մաղաթիայ Աբեղայի Պատմություն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 6։

⁴⁶ Օրինականների համար տե՛ս Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր։

վածում ներկայացնում է իբրև գավառական, իսկ Գր. Փեշտմալճյանի և Առ. ձեռն բառարաններն էլ իբրև գրաբարի համար ընդհանուր բառ։ Դուռն բառը հայերենի տակավին չստուգաբանված բառերից է, որի ծագման մասին էլ, որ ավելի հետաքրքրական է, մի ենթադրություն անգամ չի արվել մինչև այսօր։ Արմատական բառարանում չը. Աճառյանը նշում է միայն այդ անստույգ բառի նշանակությունը, որոշ գրավոր վկայությունները, ինչպես նաև համապատասխան բարբառային ձևերը՝ դուռն (Տփ.), դ'ուռն (Ախց. Երև. Զղ. Սշ. Մշ.), տուռն (Հմշ. Շմ.), քուռն (Հձ. Ննխ. Խ.), դ'իւնն (Ակն.), տիւնն (Ղրբ.), դ'օնն (Ողմ.), դ'ընն (Զթ.)⁴⁷։ Բարբառային այդպիսի լայն գործածությունները, ինչպես նաև գրավոր ուղ ավանդված լինելու հանգամանքը ցույց են տալիս, որ դուռն բառը ունի բարբառային ծագում և ամենայն հավանականությամբ առաջ է եկել ընդ + ունն կապակցությունից՝ ընդ նախդրի առաջին երկու հնչյունների անկումով։ Ի՞նչ հիմքեր կան նման ձանապարհով դուռն բառի առաջացումը հնարավոր ձանաչելու համար. նախ՝ պետք է ասել, որ որոշակի իմաստային կապ և ընդհանրություն են երևան հանում ունն և դուռն բառերը միմյանց նկատմամբ. եթե դուռն-ը նշանակում է «Քիթ. ցուռկ, կնճիթ. և Կզակ. ծնօտ»⁴⁸, «քիթը, բերանը և ծնոտը միասին»⁴⁹ «1. Անասունների կզակ, ցուռկ, կնճիթ, քիթ-բերան»⁵⁰, 2. Մարդկանց երեսի ներքի կեսը, քիթից վար, քիթ ու պոռնակ, քիթ-բերան», ապա ունն-ն էլ նշանակում է «Խնդունք. հոտոտելիք. քիթ և ստորին կողմն նորին, ուր արանց մազը բուսանին»⁵¹, «Քիթ, քիթի ծայրը, քիթի և բերանի միջև գտնված մասը, պեխ, բեղ»⁵², «1. Հոտառության գործարան, քիթ։ 2. Քիթի ներքևի բացվածքը, ուռնգ, պոռնակ»⁵³։ Դժվար չէ նկատել, որ դուռն-ը ունն-ից տարբերվում է պարզապես իր բառային լայն իմաստով։ Ունն-ը ցույց է տալիս քիթը և դրա ստորին կողմը, իսկ դուռն-ը՝ դրանց հետ միասին նաև բերանն ու ծնոտը։ Ունն բառը իմաստի լայնացմամբ այդպիսի նշանակություն է ձեռք բերել ընդ նախդրի շնորհիվ. այլ կերպ՝ ընդ-ը դրվելով հայցական հոլովածակի վրա՝ արտահայտել է «միջով», «տարածությամբ» գաղափարը⁵⁴ և նրա հետ միասին (ընդ + գունն = ընչով) նշանակել դեմքի այն մասը, որտեղ քիթը, բերանը և ծնոտն են գտնվում։

Եվ այնուհետև. հայտնի է, որ ընդ նախդիրը բաղմաթիվ բառերի ու բառարմատների հետ բաղադրվելով՝ շատ դեպքերում եթե կորցրել է դ հնչյունը, ինչպես՝ ընդ + բունն > ընդբունն > ընբունն > ըմբունն, ընդ + կեր > ընկեր, ընդ + կալել > ընկալել, ընդ + բեր > ընբեր, ընդ + տան ÷ ի > ընտանի, ընդ + դիր > ընդիր > ընտիր և այլն⁵⁵, ապա բարբառներում ձայնավորով սկսվող այլևայլ բառերից առաջ պահպանել է սոսկ հենց այդ հնչյունը, հմմտ. ընդ + ալյս > ղալյս.

47 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 600։

48 «Նոր բառգիրք Հայկազնի լեզուի», հատ. 2, էջ 1062։

49 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 600։

50 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, էջ 536։

51 «Նոր բառգիրք Հայկազնի լեզուի», հատ. 2, էջ 551։

52 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 5, էջ 658։

53 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 603։

54 Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1958, էջ 267։

55 Դրանց մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 1032—1039։

դէս>տէս, ընդ+այն>դայն>դէն>տէն, ընդ+որ>դոր>թօրն, թօրն, ընդ+խեար դալ>դիւար գալ>դիրուր դալ+ստիւրսի կ'ալ>ստիւրն կ'ալ և այլն⁵⁵:

Ահա ճիշտ նույն ձևով ընդ+ունչ կապակցության մեջ, որի երբեմնի գոյության մասին է վկայում Ղ. Փարպեցու գործածած ընդ+ունչս+աբկու>ընդունչսաբկու («1. Քիթուպոչ ընող՝ կախարդական շարժմունքով: 2. քթին տակեն մրմռալով (խոսք)՝ բառը⁵⁷, ընդ-ը նույնպես կորցրել է սկզբի ըն և առաջ բերել դունչ ձևը: Ի դեպ («Հողմն իմն տօթագին շնչեաց ի Կալկաթա, և ում եհաս՝ ուռոյց զունչն և զդունչն») նախադասության⁵⁸ մեջ ունչ և դունչ բառերի միատեղ գործածությունը պատահական չլինելով՝ նույնպես ազդանշում է նրանց ծագումնաբանական կապը (հմտ. նաև՝ եռ ու դեռ, արդ ու զարդ, ամպ ու զամպ և այլն): Վերջապես նշենք, որ դունչ բառը բարբառներում երևան է հանում այնպիսի հնչյունափոխական ձևափոխություններ, որպիսիք հաստուկ են ընդ նախդրից և որևէ այլ արմատից նման ճանապարհով ծագած քարացած բարդություններին: Այս ամբողջն էլ հաստատուն հիմք են տալիս պնդելու, որ դունչ-ը հայերենի բարբառների բովում ձևավորված բառ է և իրոր առաջ է եկել ընդ+ունչ կապակցությունից, մեկընդմիջտ գրավելով վերջինի տեղը⁵⁹, որի ծագումը ևս դեռ հայտնի չէ հայագիտությանը:

ИСТОЛКОВАНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

(Р е з ю м е)

Первоначальные формы слов армянского языка подвергались разнообразным видоизменениям почти во всех армянских диалектах и говорах, вследствие чего в них возникли самостоятельные, часто с иными лексическими значениями слова, отличающиеся от своих первоначальных форм. Происхождение ряда таких слов не выяснено и до сих пор остается неразрешенным в арменистике.

В данной статье детально рассматривается происхождение подобных слов: մրցնել («запирать», «закрывать»), խոխա||խօխա (1. «ребенок»: 2. «наивный», «неопытный»), անոխ («назло», «именно», «как-будто», «как раз», «же»...), նօշ||նօշֆ («сплетня», «злословие»), շալֆ («пар», «испарение»), պէկ||սլեկ («разрушенное место», «развалина»), դունչ («морда»). На основе фонетического и семантического анализа этих

⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

⁵⁷ Տե՛ս Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904, էջ 54. Իսկ նշանակության համար՝ «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», էջ 310:

⁵⁸ Դա բերվում է ըստ Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանի» (էջ 170):

⁵⁹ Ունենալով բարբառային ծագում, ի տարբերություն մեկնաբանված մյուս բառերի, դունչ-ը գուրս է եկել բարբառների ոլորտներից և ձևով բերել գրական բառի արժեք:

слов делается вывод, что все они восходят соответственно к формам—словам древнеармянского языка (грабара) *սմրացոյցանել* («укрепить», «оградить», «запирать», «загораживать»), *երեխայ*||*երեխայ* («ребенок», «младенец», «наивный», «неопытный»), *սո* (форма ед. числа пов. накл. глагола *սովել* («взять», «принять») *ծօն*||*ծօն* (1. «качание» «движение»; 2. «качели»), *շի* («роса», «мелкие капли росы»), *րի* («двор около строения»), *րեղ + ուն* («с ноздрями») и являются их диалектными вариантами, употребляемыми большей частью в горисском и карабахском диалектах.